

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀԲԱԶՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը. 00.02. - ,Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և  
կառավարումն մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Ա.Խ.Մարկոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Ս.Ա.Դավոյան**

տնտեսագիտության թեկնածու,  
պրոֆեսոր  
**Ա.Ս.Մարիբեկյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 18-ին ժամը 13.30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:  
Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013 թվականի սեպտեմբերի 17-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ա.Զ.Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Ներդրումների խրախուսումը ՀՀ տնտեսական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկն է: Հայաստանի Հանրապետությունը ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է ,բաց դռների քաղաքականություն: Այն ամրագրված է Օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ օրենքում և ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգում: Հայաստանի ներդրումային դաշտը համարվում է ԱՊՀ երկրների շարքում ամենաբացերից մեկը, սակայն ո՛չ ներդրումների ծավալների տեսանկյունից, ո՛չ էլ բնակչության կենսամակարդակի վրա ազդեցության չափերով այն չի կարող բավարար համարվել: Ավելին, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով վերջին տարիներին ՀՀ-ում նկատվել է, հատկապես, օտարերկրյա ներդրումների ծավալների զգալի նվազում:

Ներդրումային հոսքերի մեծության, դրանց շարժի, համընդհանուր միտումների վերաբերյալ տեղեկատվությունը բազմազան է, զգալի է նաև հրապարակումների թիվը, որոնք անդրադառնում են երկրների ներդրումային միջավայրին՝ ներդրումներ իրականացնելու հեշտությանը, ներդրումների իրավական պաշտպանվածությանը: Սկսած 2009թ.-ի երկրորդ կիսամյակից համաշխարհային տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումները (այսուհետ՝ ՕՈՒՆ) սկսեցին աստիճանաբար դուրս գալ ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված անկումից: Իսկ 2010թ.-ի առաջին կիսամյակում նկատվեց դրանց մակարդակի որոշակի վերականգնում, որը որոշ զգուշավորությամբ թույլ է տալիս լավատեսորեն գնահատել կարճաժամկետ հեռանկարում ՕՈՒՆ դինամիկան: Միննույն ժամանակ ներդրումների վերաբերյալ գնահատականները ուղեկցվում են ռիսկերով և անորոշության գործոններով, ներառյալ՝ համաշխարհային տնտեսության աշխուժացման թուլությունը և անկայունությունը:

Անբարենպաստ աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանի նման երկրները, հավանաբար, առաջիկայում ևս կհենվեն իրենց ավանդական մասնագիտացումը համարվող ծառայությունների, մասնավորապես, տուրիզմի ներդրումային ներուժի վրա: Հեռանկարային հնարավորություններ են բացվում նաև գիտելիքների վրա հիմնված ճյուղերի ոլորտում, պայմանով, որ երկրների այդ խմբի կողմից կստեղծվեն համարժեք տեղեկատվական-հեռահաղորդակցության ենթակառուցվածքներ և դրան համապատասխան մարդկային կապիտալ:

Հայաստանը, անցումային տնտեսությամբ մյուս երկրների նման, լայնածավալ ներդրումների կարիք ունի, միննույն ժամանակ այս երկրներում ավելի սուր են ներդրումների ռիսկայնության հետ կապված խնդիրները: Հայաստանի պարագայում էական նշանակություն ունի շրջափակումը, Ղարաբաղյան հիմնահարցը, Ռուսաստան - Վրաստան և Իրան - ԱՄՆ

հարաբերությունների սրությունը:

Ի տարբերություն հետազոտողների մի մասի, որոնք ներդրումային միջավայրե հասկացությունը նույնացնում են գործարարությունե հասկացության հետ, անհրաժեշտություն է առաջացել կենտրոնանալ ներդրումե և դրան անմիջականորեն առնչվող ու այդպիսի միջավայրի ուսումնասիրությանը, ինչն էլ ներկայացվող աշխատանքի հիմնական առանձնահատկությունն է:

Այդ պատճառով էլ ներդրումների ներգրավման և դրանց համար միջավայրի բարելավման հիմնախնդիրները միշտ եղել են Հայաստանում վարվող տնտեսական քաղաքականության հիմնաքարերից մեկը: Վերը նշվածով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ընտրության արդիականությունը:

**Հետազոտության ուսումնասիրվածության աստիճանը:** Ներդրումային միջավայրը և դրա բարելավման հիմնախնդիրներն ուսումնասիրվել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական տնտեսագետների կողմից: Սակայն այդ հետազոտությունների մեծ մասում քննարկվում է գործարարության միջավայրը և այն նույնացվում ներդրումային միջավայրի հետ, մինչդեռ, հեղինակի կարծիքով, ներդրումային միջավայրի բարելավման նպատակը ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծումն ու ներդրումներից ստացվող հատույցի ավելացումն է:

**Հետազոտության նպատակը:** Աշխատության հիմնական նպատակն է՝ հետազոտելով ներդրումային հոսքերի համաշխարհային միտումները, ուղղությունները, ներդրումային միջավայրի բարելավման բարեփոխումների էությունը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության առանձնահատկությունները, բացահայտել հանրապետությունում ներդրումային միջավայրի բարելավման հիմնական ուղղությունները որոնք կապահովեն կայուն տնտեսական աճ:

**Հետազոտության հիմնական խնդիրները:** Սահմանված նպատակին հասնելու համար հետազոտության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնախնդիրները՝

- ուսումնասիրել ներդրումների տնտեսական սուբստանտի՝ կապիտալի ժամանակակից բովանդակությունը,
- ուսումնասիրել ներդրումների համաշխարհային շարժի, ներդրումային հոսքերի միտումներն ու հեռանկարները,
- պարզել ներդրողների պաշտպանվածության հիմնական ժամանակակից միջոցները,
- ուսումնասիրել Հայաստանում վարվող ներդրումային քաղաքականության հիմնական տարրերը և բացահայտել ներդրումների ռիսկայնության վրա ազդող գործոնները,
- վերլուծել Հայաստանի ներդրումային միջավայրի վրա ազդող հիմնական գործոնները, իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան և ներկայիս կառուցվածքը,
- առաջարկել Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավման

հիմնական ուղղությունները,

➤ դիտարկել ներդրումների իրականացման որոշակի ճյուղային առանձնահատկությունները, որոնք կարող են ապահովել առավել տնտեսական արդյունավետություն,

➤ ուսումնասիրել ներդրումների ներգրավմանն ուղղված հիմնական միջոցառումների, բարեփոխումների ուղղությունները:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ներդրումները և ներդրումային միջավայրն է, իսկ առարկան՝ Հայաստանի Հանրապետությունում վարվող ներդրումային քաղաքականությունը, դրա առանձին տարրերը:

**Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:**

Ուսումնասիրության համար տեսական հիմք է ընդունվել տարբեր երկրների և, մասնավորապես, միջազգային կազմակերպությունների կողմից ամփոփվող համաշխարհային փորձը, տնտեսագիտության դասական դպրոցի ներկայացուցիչների, հետազոտության հիմնախնդիրներով զբաղվող ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հայտնի մասնագետների գիտական աշխատություններն ու հրապարակումները:

Ատենախոսության տեղեկատվական հիմքը Համաշխարհային բանկի, տարբեր միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների պաշտոնական, ինչպես նաև տարբեր առևտրային կազմակերպությունների, փորձագիտական կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցներն ու այլ տեղեկատվական նյութերն են:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել երևույթների ուսումնասիրության նկատմամբ համակարգային մոտեցման և վերլուծության մեթոդները: Կիրառվել են հետազոտությունների վիճակագրական, տնտեսա-վիճակագրական խմբավորումների, համեմատական և գործոնային վերլուծությունների և փորձագիտական գնահատման մեթոդները:

**Հետազոտության գիտական նորույթը:** Աշխատության հիմնական գիտական արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

➤ բացահայտվել են Հայաստանի Հանրապետությունում ներդրումային գրավչության դրական (առևտրային կազմակերպություններում 100%-անոց սեփականություն ունենալու հնարավորությունը, ներդրումներ կատարելու համար որևէ թույլտվություն ձեռք բերելու բացակայությունը, ներմուծման գրոյական մաքսատուրքերը և ապրանքների ու ծառայությունների արտահանման քվտաների բացակայությունը, հարկի հետաձգված վճարման հնարավորության ընձեռումը, արտարժույթի ազատ փոխանակման և արտարժույթային փոխանցումների իրականացման սահմանափակումների բացակայությունը, օրենսդրության փոփոխության դեպքում ներդրումային երաշխիքների նախատեսումը) և բացասական (ներքին շուկայի փոքր չափերը,

բնակչության փոքր թիվը և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցածր մակարդակը, բնական ռեսուրսների սղությունը և վառելիքաէներգետիկ ռեսուրսների բացակայությունը, ենթակառուցվածքային հիմնախնդիրները և տրանսպորտային հաղորդակցության ուղիների կախվածությունը հարևան երկրներից) կողմերը և ներդրումների ներգրավման նախադրյալները,

➤ բացահայտվել են ներդրումային միջավայրի ռիսկայնության գործոնները, որոնք ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ կազմակերպական բնույթ, և առաջարկվել են ռիսկայնության նվազեցման հիմնական ուղիները (գործարքների և ներդրումների պատշաճ իրավական պաշտպանության համար ապահովել կայուն և կանխատեսելի պայմաններ, վերացնել հարկային և մյուս կարգավորող ու վարչական սահմանափակումները, ներգրավել վերագրային կորպորացիաների ներդրումները, բազմազանեցնել արտահանման կառուցվածքը, ավարտել մասնավորեցման գործընթացը),

➤ առաջարկվել են Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ (մրցակցային միջավայրին, նոր ընկերությունների շուկա մուտք գործելուն, ֆինանսական շուկային վերաբերող) և կազմակերպական (պետական մարմինների գործունեությանը և վարչարարությանը վերաբերող) բարելավման հիմնական ուղղությունները,

➤ առաջարկություններ են ներկայացվել ներդրումների ներգրավման տեսանկյունից առաջնային համարվող հարկային և մաքսային ոլորտների բարեփոխման միջոցառումների (ներառյալ՝ հարկային հաշվառման, հարկային հաշիվների վարման, հարկատուների հաշվետվողականության, հարկային տեղեկատվությունից օգտվելու, մաքսային ձևակերպումների ընթացակարգի, մաքսային ռիսկերի նվազեցման, մաքսային հսկողության տեխնոլոգիաների կատարելագործման, կադրերի և ենթակառուցվածքների) վերաբերյալ:

#### **Նտազոտության արդյունքների գործնական նշանակությունը:**

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում մշակված տեսական և մեթոդական դրույթները, ինչպես նաև ՀՀ ներդրումային միջավայրի վերլուծության և գնահատման արդյունքները կարող են օգտագործվել տնտեսական բարեփոխումների հետագա ուղղությունների մշակման և իրականացման ընթացքում:

Նտազոտության արդյունքները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրի բարելավման ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ մշակվող փաստաթղթերում, ՀՀ իրավական ակտերում, մշակվող ճյուղային ծրագրերում, ինչպես նաև պետական կառավարման տարբեր մարմինների գործունեության ընթացքում:

#### **Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի կողմից 2012 և 2013 թվականներին կազմակերպված կոնֆերանսներում: Ատենախոսության մեջ ստացված գիտական և կիրառական արդյունքները հեղինակի կողմից 2012 թվականին ներկայացվել են ,Հայաստանի

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները գիտաժողովի նյութերում: Քննարկվող հիմնախնդիրներին առնչվող թեմայով տպագրվել է հինգ գիտական հոդված:

**Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը (առանց հավելվածների) կազմում է 159 էջ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, հակիրճ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝** Ներդրումների համաշխարհային միտումները և ներդրողների պաշտպանության արդի հիմնահարցերը գլխում ուսումնասիրվել են .կապիտալի հասկացության տնտեսագիտական բովանդակությունը և դրսևորման ձևերը, ներկայացվել են նախաձգնաժամային և հետձգնաժամային ժամանակահատվածում ներդրումների համաշխարհային միտումներն ու հեռանկարները, ներդրողների պաշտպանության ներկայիս հիմնախնդիրները և այն հիմնական ոլորտները, որտեղ վերջին տարիների ընթացքում իրականացվել են արմատական բարեփոխումներ:

Ներդրումներ (կապիտալ ներդրումներ) եզրը սովորաբար օգտագործվում է բնութագրելու համար իրական հիմնական կապիտալի (capital stock) պահպանման կամ ավելացման ծախսերի հոսքը: Ավելի ճշգրիտ սահմանումը, որն իր մեջ ներառում է վերը բերվածն այն է, որ ներդրումները ծախսերի հոսք են, որոնք նախատեսված են անմիջական սպառման բարիքների արտադրության համար: Ներդրումային նախագծերը կարող են այնպիսի ձևեր ունենալ, որոնք ավելացնում են ֆիզիկական կամ մարդկային կապիտալը, ինչպես նաև պաշարները: Ներդրումները հոսքեր են, որոնց մեծությունը որոշվում է այն նախագծերով, որոնք ապահովում են դրական զուտ գեղջված արժեքը կամ եկամտի ներքին դրույքաչափը:

Աշխարհի երկրների վերջին տարիների փորձը և, հատկապես, 2008-2009թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը գալիս են հավաստելու, որ հասարակության համար սպառումը չպետք է դառնա ինքնանպատակ, որ սպառումն առանց ներդրումների, հատկապես իրական ներդրումների, վտանգում է սոցիալ-տնտեսական կայունությունը և բնակչության բարեկեցությունը: Միկրոմակարդակում, ներդրումներ-սպառումն

հարաբերակցության մեջ ներդրումներն անհատի կողմից տնօրինվող եկամտի այն մասն են, որոնք նախատեսված չեն ընթացիկ սպառման համար: Այլ կերպ

ասած, ներդրումները ոչ այլ ինչ են, եթե ոչ սպառման հետաձգում կամ հետաձգված սպառում:

Շուկայական տնտեսության պայմաններում ներդրողները միտված են նվազագույն ռիսկերով առավելագույն եկամուտների ստացմանը: Այդ նպատակի իրականացումը եթե հնարավոր է, ապա միայն դիվերսիֆիկացման սկզբունքի հիման վրա ակտիվների պորտֆելի ձևավորման միջոցով: Դիվերսիֆիկացման (բազմազանեցման) սկզբունքը և ակտիվների պորտֆելի ձևավորումը կիրառում են գտնել դեռևս մերկանտիզմի ժամանակաշրջանում: Սակայն այն իր տեսական հիմնավորումը ստացավ միայն 1950-ական թվականներին՝ հանձինս Հ.Մարկովիցի պորտֆելային տեսության, որը հետագա զարգացում ստացավ Ու. Շարպի, Ջ. Թոբինի, Ջ. Լինտների աշխատություններում:

Ներդրումային պորտֆելի ժամանակակից տեսությունը միանման կիրառում չի կարող գտնել զարգացած և զարգացող երկրներում: Ջարգացած շուկաներում ներդրողը լայն հնարավորություններ ունի իր պորտֆելը դիվերսիֆիկացնելու՝ ֆոնդային շուկայում առկա բազմաթիվ ու տարատեսակ ֆինանսական գործիքների միջոցով: Մինչդեռ ֆինանսական, այդ թվում արժեթղթերի զարգացող և թերզարգացած շուկաներում՝ ինչպիսին է ՀՀ արժեթղթերի շուկան, ներդրողը չունի ակտիվների ընտրության լայն հնարավորություն: Թերզարգացած ֆինանսական շուկաների կառուցվածքային ձևախեղումները կապիտալի շուկայի թերզարգացվածությունը, բարձր անկայունությունը, ֆինանսական ակտիվների, հատկապես արժեթղթերի սահմանափակ ընտրությունը, բարձր գնաճը և բացասական սպասումները լուրջ խնդիրներ են հարուցում ներդրումային պորտֆելների ձևավորման և կառավարման առումով: Այդ պայմաններում արդիական են դառնում ներդրումային պորտֆելի ռիսկի նվազեցման հիմնախնդիրները, որին կարելի է հասնել նաև պորտֆելի մեջ որակյալ և եկամտաբեր անշարժ գույք ներգրավելով:

Ներդրումների համաշխարհային միտումներն ու հեռանկարները հաշվի առնելը կարևոր է Հայաստանի փոքր բաց տնտեսության համար: ՕՌԻՆ հետճգնաժամային ժամանակաշրջանի վերլուծությունը վկայում է, որ համաշխարհային ՕՌԻՆ ներհոսքը 2011 թվականին գերազանցեց նախաճգնաժամային միջին ցուցանիշը, սակայն այն դեռևս 23%-ով ցածր է 2007 թվականի իր առավելագույն ցուցանիշից: Համաշխարհային ՕՌԻՆ ներհոսքը 2011 թվականին 2010թ.-ի համեմատ աճել է 16%-ով՝ ապահովելով վերազգային կարպորացիաների շահույթների ավելացումը և զարգացող երկրների համեմատականորեն ավելի բարձր տարեկան տնտեսական աճի տեմպերը: Ներմուծված համաշխարհային ՕՌԻՆ պաշարներն ավելացել են 3%-ով՝ հասնելով 20.4 տրիլիոն ԱՄՆ դոլարի:

Ներդրումների աճը վերջին ժամանակահատվածում համընդհանուր բնույթ է կրել՝ իրականացվելով ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող և անցումային տնտեսություններով երկրներում: Ընդ որում, զարգացող և անցումային տնտեսություններում ներդրումների ներհոսքը 2011թ.-ին աճել է 12%-ով՝ հասնելով ռեկորդային 777 մլրդ ԱՄՆ դոլարի մակարդակի, և

ներդրումները հիմնականում իրականացվել են նոր (գրոյից սկսվող) ծրագրերում: Մինչդեռ զարգացած տնտեսություններում նույն ժամանակահատվածում ներդրումների 21%-անոց աճը հիմնականում ապահովվել է արտասահմանյան վերազգային կորպորացիաների կողմից իրականացված միաձուլումների և կլանումների արդյունքում:

ՕՈՒՆ համընդհանուր օրինաչափությունները վկայում են, որ՝

➤ շարունակաբար ավելանում է վերազգային կորպորացիաների կողմից իրականացվող ներդրումների մասնաբաժինը, ինչը նպաստում է ընկերությունների հետագա միջազգայնացմանը,

➤ համաշխարհային ՕՈՒՆ ներհոսքի կեսը բաժին է հասնում զարգացած երկրներին,

➤ 2007-2011 թվականներին զարգացող երկրներ ՕՈՒՆ ներհոսքն ավելացել է 26.9%-ից մինչև 44.9%,

➤ անցումային տնտեսությամբ երկրները ներգրավում են ընդամենը ՕՈՒՆ 6%-ը, ինչն անբավարար ծավալ կարելի է համարել հաշվի առնելով տնտեսությունների արագ զարգացման տեմպերի ապահովման անհրաժեշտությունը,

➤ թույլ, խոցելի և ոչ մեծ տնտեսություն ունեցող երկրներ ՕՈՒՆ հոսքերի կրճատումը հատուկ անհանգստության առարկա է դառնում՝ նկատի ունենալով այդ երկրների զարգացման համար ներդրումների դերն ու նշանակությունը:

Ամբողջությամբ վերցրած ներդրումային քաղաքականության ընթացիկ միտումները բնութագրվում են օտարերկրյա ներդրումների իրականացման հետագա ազատականացմամբ և ընթացակարգերի պարզեցմամբ: Մինչև նույն ժամանակ ակտիվացել են նաև օտարերկրյա ներդրումների կարգավորման ոլորտում իրականացվող ջանքերը, որոնց նպատակն է աջակցել պետական քաղաքականության իրականացմանը (օրինակ, շրջակա միջավայրի պաշտպանության, աղքատության դեմ պայքարի և/կամ ազգային անվտանգության ապահովման ոլորտում): Քաղաքականության մեջ նման երկվածությունը և քաղաքական ձգտումը փոխելու պետության ու ներդրողների միջև իրավունքների և պարտավորությունների հաշվեկշիռը, նկատվում է և՛ ազգային, և՛ միջազգային քաղաքականության մակարդակներում, ըստ որում՝ շեշտադրումները փոխվում են հոգուտ պետության դերի ուժեղացմանը:

Ներդրումների ներգրավման ազատականացման քաղաքականությունը շարունակվում է, մինչև նույն ժամանակ կարգավորումները դառնում են ավելի կոշտ: Օտարերկրյա ներդրումների ոլորտում 2009թ.-ի ընթացքում բացահայտված ազգային քաղաքականության 102 նոր միջոցառումներից մեծ մասը (71-ը) ուղղված են եղել օտարերկրյա ներդրումների հետագա ազատականացմանը և խրախուսմանը: Սա այն փաստի վկայությունն է, որ համաշխարհային տնտեսական և ֆինանսական ցնցումները դեռևս չեն հանգեցրել ներդրումների ոլորտում հովանավորչության ուժեղացմանը: Ձեռնարկված միջոցառումները ներառել են, մասնավորապես, նախկինում տնտեսության փակ ոլորտներ մուտք գործելու ազատականացումը, հողամասերի

ձեռքբերման ռեժիմի ազատականացումը, մենաշնորհների վերացումը և պետական ձեռնարկությունների մասնավորեցումը:

Աղյուսակ 1-ում ներկայացված է 2008-2012 թվականներին իրականացված՝ ներդրումների պաշտպանության ոլորտի բարեփոխումների բովանդակությունը:

**Ատենախոսության երկրորդ՝** Ներդրումային միջավայրը և ներդրումների առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում գլուխը նվիրված է հանրապետությունում ներդրումների ներգրավման նախադրյալներին, երկրում վարվող ներդրումային քաղաքականությանը, առանձնահատկություններին, ինչպես նաև ներդրումների ռիսկայնության խնդիրներին: Ատենախոսության այս մասում ներկայացված է նաև օտարերկրյա ներդրումների դինամիկան և կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև ներդրումների տեսանկյունից առաջատար համարվող և հիմնական գործընկեր երկրները:

Հայաստանի կառավարությունն իրականացնում է գործարար միջավայրի խորը և համապարփակ բարեփոխումներ՝ օտարերկրյա ներդրողների և գործարարների համար առաջարկելով բիզնեսի համար նպաստավոր միջավայր: Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղղելով ձեռնարկատիրության զարգացմանը, ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգի կայացմանը, կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը, կարգավորման ազդեցության գնահատման համակարգի բարելավմանը, վարչարարության և տնտեսվարողների ծախսերի նվազեցմանը:

Վերջին ժամանակաշրջանում իրականացված միջոցառումների հետևանքով Հայաստանում ՕՌԻՆ-երի ներգրավման համար ձևավորված նախադրյալներն են՝

- միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի դրական գնահատականները (մասնավորապես, Գործարարությամբ զբաղվելը 2013-ը (Doing Business 2013) դասակարգիչում Հայաստանը 185 երկրների շարքում զբաղեցնում է 32-րդ տեղը, իսկ մեկ այլ աշխարհահռչակ վարկանիշային գործակալություն (Fitch Rating) Հայաստանին տվել է երկարաժամկետ ,BB-ը կայուն վարկանիշը՝ օտարերկրյա և ազգային արժույթի կայունության համար),

**Աղյուսակ 1**

**2008-2012 թվականների ընթացքում ներդրողների պաշտպանության ուղղությամբ իրականացված քայլերը**

<b>Երկրները</b>	<b>Բարեփոխման բնագավառը</b>
Դոմինիկյան Հանրապետություն, Բնդոնեզիա, Մակեդոնիա, Ռուանդա, Սիերա-Լեոնե, Տաջիկստան, Թունիս, Ուկրաինա (DB 2010)	Ընկերությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվության բացառությունը (մատչելիությունը) ավելացնելու պահանջներ
Հայաստան, Կոսովո, Նիդերլանդներ,	Փոխկապակցված անձանց միջև կնքվող

Պերու, Սլովենիա, Թայվան, Չինաստան (DB 2013), Դոմինիկյան Հանրապետություն, Մակեդոնիա, Ռուանդա, Սիերա-Լեոնե, Թունիս, Ռեյնլանդ-Ֆրանկոն (DB 2010)	գործարքների կանոնակարգման (հաստատման) պահանջների սահմանում
Դոմինիկյան Հանրապետություն, Ռուանդա, Սիերա-Լեոնե, Ռեյնլանդ-Ֆրանկոն (DB 2010)	Ընկերությունների մասին նոր օրենքի մշակում
Հայաստան, Կորեայի Հանրապետություն, Կոսովո, Լեհաստան, Պերու, Թայվան, Չինաստան, Տաջիկստան (DB 2013), Կոլումբիա, Դոմինիկյան Հանրապետություն, Մակեդոնիա, Ռուանդա, Տաջիկստան (DB 2010)	Ընկերությունների տնօրենների նկատմամբ դատական հետապնդում սկսելու գործընթացի հեշտացում
Հայաստան, Հունաստան, Իրանի Իսլամական Հանրապետություն, Կոսովո, Լեհաստան, Մոնղոլիա, Թայվան, Չինաստան (DB 2013), Դոմինիկյան Հանրապետություն, Ռուանդա (DB 2010)	Ներքին կորպորատիվ տեղեկատվության նկատմամբ մատչելիության ավելացում
Կոսովո, Մոլդովա (DB 2013), Կոլումբիա, Ռուանդա, Սիերա-Լեոնե, Տաջիկստան (DB 2010)	Փոխկապակցված անձանց միջև կնքված կասկածելի (վնասարար) գործարքները չեղյալ համարելու հնարավորության րնձեռում
Տաջիկստան, Թունիս (DB 2010)	Նախքան փոխկապակցված անձանց միջև գործարքների կնքումը արտաքին անկախ մարմնի կողմից դրանք ուսումնասիրելու (վերանայելու) պահանջի սահմանում
Մալի (DB 2010)	Պատասխանողների և վկաների ուղղակի բանավոր հարցաքննման հնարավորության սահմանում

Աղբյուրը՝ Doing Business 2013. Smarter Regulations for Small and Medium-Size Enterprises, էջ 78 և Doing Business 2010. Reforming through Difficult Times, էջ 39:

- ձեռնարկությունների ակնթարթային գրանցման հնարավորությունը, որը հնարավոր դարձավ ձեռնարկությունների գրանցման Մեկ պատուհանիե համակարգի ներդրմամբ, էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ,
  - շինարարական դյուրին թույլտվությունները, էապես նվազեցվել է կառուցապատման ընթացակարգերի թիվը, տևողությունն ու արժեքը,
  - լիցենզավորման պարզեցված ընթացակարգերը և կայուն բանկային համակարգը,
  - արտոնյալ առևտրային ռեժիմների կիրառում և ազատ տնտեսական գոտիների ստեղծումը,
  - աշխատանքային հարաբերությունները, բարձր որակավորում ունեցող, հմուտ և կրթված աշխատուժը:
- Անփոփելով ՀՀ ներդրումային քաղաքականության տարրերի ուսումնասիրության արդյունքները, կարող ենք նշել երկրի հետևյալ ներդրումային առավելությունները՝

1. Առևտրային կազմակերպություններում մինչև 100% սեփականության մասնաբաժին ունենալու հնարավորությունը,

2. Ներդրումներ կատարելու համար որևէ թույլտվություն ձեռք բերելու անհրաժեշտություն չկա,

3. Օտարերկրացիների համար հողի սեփականություն ունենալու հնարավորություն, երբ նրանց կողմից հիմնադրված կազմակերպությունները (իրավաբանական անձինք) հողատարածք գնելու հնարավորություն ունեն,

4. Հումք ներմուծելու համար սահմանված է գրոյական մաքսատուրք: Ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում, հնարավորություն է ընձեռնվում ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը հետաձգել երեք տարի ժամկետով:

5. Հայաստանից ապրանքների ու ծառայությունների արտահանման մաքսատուրքեր և սահմանափակումներ (քվոտավորում) չկան,

6. Օրենսդրության փոփոխության դեպքում ներդրումային երաշխիքներ են նախատեսված, երբ օտարերկրյա ներդրողը կարող է ընտրություն կատարել, թե ո՞ր օրենքից է նա ցանկանում օգտվել մինչև 5 տարի ժամկետով,

7. Ազատ տնտեսական գոտիներում շահագործողները (ներդրողներ) ամբողջությամբ (100%-ով) կազատվեն շահութահարկից, ավելացված արժեքի հարկից, մաքսատուրքի վճարման պարտավորություններից: Հարկվող եկամուտը որոշելիս ազատ տնտեսական գոտու՝ ամբողջ տարվա ընթացքում շահագործող հանդիսացող հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է ազատ տնտեսական գոտում իրականացված գործունեությունից ստացված եկամտի չափով,

8. Իրականացվում է օտարերկրյա արժույթի ազատ փոխարկում՝ հսկողության նվազագույն չափերով,

9. Արժույթային փոխանցումներ իրականացնելու համար սահմանափակումներ նախատեսված չեն,

10. Աշխատակազմի ներգրավման հարցում սահմանափակումներ չեն կիրառվում.

11. Ներդրումների համար չեն կիրառվում տեղային, տարածքային կամ աշխարհագրական սահմանափակումներ:

ՀՀ ներդրումային միջավայրը թույլացնող գործոններն են.

➤ աշխարհաքաղաքական իրավիճակը (հիմնականում դեպի ծով ելք չունենալու հանգամանքը) և հարևան առանձին երկրների հետ տնտեսական հարաբերությունների բացակայությունը,

➤ ստվերային տնտեսությունը, ինչպես նաև կոռուպցիան, բյուրոկրատական քաշքշուկները, որոնք մեծացնում են ներդրումային ռիսկը և ծախսերը,

➤ տեղական ընկերությունների ցածր արտադրական և տեխնոլոգիական կարողությունները,

➤ օտարերկրյա ներդրողների կողմից առավելապես ներմուծվող հումքի օգտագործումը. դեռևս թույլ են կապերը տեղական մատակարարների հետ:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հաշվարկվում է ՀՀ միջազգային ներդրումային դիրքը (աղյուսակ 2), որտեղ արտացոլվում են երկրի տնտեսության և արտաքին աշխարհի միջև տնտեսական հարաբերությունները և տեղեկատվական հիմք կարող են հանդիսանալ երկրի ներքին ու արտաքին տնտեսական քաղաքականությունների մշակման գործընթացներում: 2011թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության զուտ ներդրումային դիրքը բացասական է 6709.09 մլն. դոլարով, որը 2010թ. վերջի նկատմամբ ավելացել է 1032.68 մլն դոլարով: Ակտիվները աճել են 21.29 մլն դոլարով, իսկ պարտավորությունները 1546.94 մլն դոլարով:

**Աղյուսակ 2**

**ՀՀ ներդրումային դիրքը 2007-2012 թվականների վերջին, մլն դոլար**

	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Զուտ ներդրումային դիրքը	-2089.66	-3470.01	-4076.95	-5676.41	-6709.09	-6583.21
Ակտիվներ	2822.70	3110.23	4222.64	4330.07	4844.30	5068.70
Ուղղակի ներդրումներ արտերկիր	14.34	24.49	67.23	76.00	153.65	308.77
Պորտֆելային ներդրումներ	4.88	2.16	14.15	13.84	12.88	13.08
Պահուստային ակտիվներ	1659.15	1406.82	2003.68	1865.85	1932.48	1692.33
Պարտավորություններ	4912.37	6580.22	8299.59	10006.45	11553.39	11651.90
Ուղղակի ներդրումներ արտերկրներից	2485.77	3520.87	3628.22	4338.18	5045.73	5010.18
Պորտֆելային ներդրումներ	9.36	18.27	20.93	33.71	17.79	21.43

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերը, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 8-21, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-փետրվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013թ., էջ 117-121, [www.armstat.am](http://www.armstat.am)

2012թ.-ի ընթացքում ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից, ներդրումների տեսքով, հանրապետությունից ֆինանսական միջոցների արտահոսքը (առանց վճարված տոկոսների, դիվիդենդների և վարկերի մարումների) կազմել է 19.7 մլն ԱՄՆ դոլար (աղյուսակ 3):

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները վկայում են, որ 1988-2011 թվականներին ՀՀ կատարված օտարերկրյա ընդամենը ներդրումները կազմել են 16460112.2 հազար ԱՄՆ դոլար, որից 5929428.0 հազար ԱՄՆ դոլարը (կամ 32.4%-ը)՝ ուղղակի ներդրումներ են: Ըստ որում, մասնավոր հատվածի միջոցով կատարված ընդամենը ներդրումները կազմել են 7185125.4 հազար

դրլար (ամբողջի 43.7%-ը), իսկ ուղղակի ներդրումներով՝ 5327892.5 հազար դրլար (ամբողջի 32.4%-ը): Ընդամենը ներդրումները, ստացված մասնավոր ու բանկային և ֆինանսական հատվածներով, կազմել են 12188259.9 հազար դրլար (ամբողջի 70.4%-ը): Նշված ծավալից Ռուսաստանի Դաշնությանը բաժին է ընկել 4727099.7 հազար դրլար կամ մասնավոր ու բանկային և ֆինանսական հատվածներով ստացված ընդամենը ներդրումների 38.8%-ը, ԱՄՆ-ին համապատասխանաբար 510198.8 հազար դրլար և 4.2%, Գերմանիային՝ 513405.8 հազար դրլար և 4.2%, Ֆրանսիային՝ 806825.4 հազար դրլար և 6.6%, Կանադային՝ 212758.9 հազար դրլար և 1.7%: Թվարկված երկրների կողմից կատարված ներդրումները կազմում են ընդամենը մասնավոր ու բանկային և ֆինանսական հատվածներով ստացված ներդրումների 55.5%-ը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ներդրում կատարող երկրների և ներդրում ընդունող երկրների միջև արտաքին առևտրի և ներդրումների կապի ուսումնասիրությունը: Ինչպես ցույց են տալի կատարված հետազոտությունները, վերջին տարիներին ըստ առանձին երկրների ՀՀ արտաքին առևտրի և ներդրումների ծավալների միջև գոյություն ունեցող կապը (կոռելյացիան) ուղղակի չէ: Օրինակ, 2008-2011 թվականներին, թեև Գերմանիան ՀՀ-ում կատարած ընդամենը ներդրումների ծավալով զբաղեցրել է 6, 4, 5, 12, 4 և 3-րդ տեղերը, սակայն ՀՀ-ից Գերմանիա կատարած արտահանումների ծավալով զբաղեցրել է 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը: Գործընկեր երկրների վերաբերյալ առևտրի և ներդրումների կապի վերլուծությունը ներկայացված է աշխատության այս մասում:

**Ատենախոսության երրորդ՝** Ներդրումային միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ առաջնահերթությունները և ներդրումների ներգրավման հիմնական միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում գլխում ուսումնասիրվել են ներդրումային միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ առաջնահերթությունները, ինչպես նաև ներդրումների ներգրավմանն ուղղված հիմնական միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում: Ատենախոսության այս մասում ներառված առաջարկությունները վերաբերում են Հայաստանի մրցակցային միջավայրին, նոր ընկերությունների շուկա մուտք գործելու հիմնախնդրին, ֆինանսական շուկաներին, ինչպես նաև պետական մարմինների և ներդրումային գործունեություն իրականացնող անձանց հարաբերություններին, հարկային և մաքսային ոլորտի բարեփոխումներին, ներառյալ՝ վարչարարությանը:

Աղյուսակ 3

Օտարերկրյա ներդրումների հոսքերը 2009-2012 թվականներին, ըստ ներդրումների տեսակների

մլն դոլար

	Ներդրումներ Հայաստանում (պարտավորություններ)						Հայաստանի ներդրումներն արտերկրում (ակտիվներ)					
	2009	2010	2011	2012	2012թ. 2011թ. նկատ.	աճի տեմպը, %	2009	2010	2011	2012	2012թ. 2011թ. նկատ.	աճի տեմպը, %
<b>Շնչափներ ներդրումներ</b>	<b>2555.4</b>	<b>1555.8</b>	<b>1 735.9</b>	<b>1 587.0</b>	<b>-148.9</b>	<b>91.4</b>	<b>193.7</b>	<b>94.6</b>	<b>115.3</b>	<b>19.7</b>	<b>-95.6</b>	<b>17.1</b>
<b>Ուրիշակի ներդրումներ</b>	<b>906.2</b>	<b>706.9</b>	<b>906.3</b>	<b>656.7</b>	<b>-249.6</b>	<b>72.5</b>	<b>52.7</b>	<b>8.3</b>	<b>78.0</b>	<b>15.8</b>	<b>-62.2</b>	<b>20.3</b>
<b>Պորտֆելային ներդրումներ</b>	<b>11.0</b>	<b>12.23</b>	<b>-</b>	<b>1.4</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>10.6</b>	<b>1.5</b>	<b>-</b>	<b>1.1</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Այլ ներդրումներ<sup>1</sup></b>	<b>1638.2</b>	<b>836.7</b>	<b>829.6</b>	<b>928.9</b>	<b>99.3</b>	<b>112.0</b>	<b>130.4</b>	<b>84.8</b>	<b>37.3</b>	<b>3.3</b>	<b>-34.0</b>	<b>8.8</b>
Առևտրային վարկ	49.9	26.6	39.5	84.4	44.9	213.7	8.8	12.5	16.0	0.1	-15.9	0.6
Կարճաժամկետ	31.2	5.9	4.2	4.4	0.2	104.8	8.8	12.5	16.0	0.1	-15.9	0.6
Երկարաժամկետ	18.7	20.7	35.3	80.0	44.7	2.3 անգ	-	-	-	-	-	-
Վարկեր	1588.3	810.1	790.1	844.5	54.4	106.9	121.6	72.3	21.3	1.7	-19.6	8.0
Կարճաժամկետ	-	49.4	106.4	-	-	-	120.0	62.6	-	-	-	-
Երկարաժամկետ	1588.3	760.7	683.7	844.5	160.8	123.5	1.6	9.7	21.3	1.7	-19.6	8.0
Դրամավարկային կարգավորման մարմիններ	337.4	100.0	91.1	99.5	8.4	109.2	-	-	-	-	-	-
Պետական կառավարման մարմիններ	1065.0	313.7	284.0	348.7	64.7	122.8	-	-	-	-	-	-
Բանկեր	0	150.3	227.0	319.2	92.2	140.6	-	7.9	19.1	1.6	-17.5	8.4
Այլ հատվածներ	186.2	196.6	81.6	77.1	-4.5	94.5	1.6	2.0	2.2	0.1	-2.1	4.5

<sup>1</sup> Առանց կանխիկ դրամական միջոցների և ավանդների ու այլ պարտավորությունների (ակտիվների): Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-փետրվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011թ., էջ 70, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-փետրվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012թ., էջ 85, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-փետրվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013թ., էջ 83

Մրցակցությունը հանդիսանում է կազմակերպություններում իրականացվող նորարարությունների հիմնական խթանը: Ներդրումային միջավայրի կարգավորման բարեփոխումների շրջանակներում անհրաժեշտ է պարզեցնել տեխնիկական ստանդարտները և պահանջները: Պետք է շարունակվեն կարգավորող և վերահսկող մարմինների գործունեության կանոնակարգման աշխատանքները, որոնք թույլ չեն տա այդ ինստիտուտներն օգտագործել անբարեխիղճ մրցակցության նպատակով: Անհրաժեշտ է ուժեղացնել ստուգումների անցկացման ժամկետների համար սահմանված նորմերի վերահսկողությունը:

Տնտեսության իրական հատվածի պետական աջակցության մեխանիզմների բարելավումը պետք է նպատակաուղղված լինի պետական միջոցների օգտագործման արդյունավետության ու թափանցիկության բարձրացմանը, ռազմավարական խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ արտահանման խթանումը և ներդրումների դիվերսիֆիկացումը: Միջոցների տրամադրումը պետք է կախված կլինի կոնկրետ արդյունքներից և կազմակերպվի մրցութային կարգով: Պետք է կազմել համալիր հաշվետվություն և վերլուծել պետական աջակցության տարբեր ձևերը, ներառյալ շուկայի մասնակիցներին տրվող արտոնությունները և առավելությունները: Ընդ որում, որոշ արտադրողների նկատմամբ ցուցաբերվող աջակցությունը չպետք է խեղաթյուրի շուկայական մրցակցության պայմանները:

Կառավարությանն առաջին հերթին անհրաժեշտ է ընդլայնել արտահանման աջակցության ծավալները և բարելավել աջակցության ժամանակ կիրառվող գործիքները: Մասնավորապես, պետք է էականորեն ընդլայնել պետական ֆինանսավորումը՝ ուղղված նոր արտաքին շուկաների գրավման խթանմանը, արտահանման վարկավորման ծավալների ընդլայնմանը, առավել լայնորեն ուսումնասիրել արտաքին շուկաները և կոնկրետ ապրանքների շարժը նոր շուկաներ:

Գոյություն ունեցող կազմակերպությունների միջև մրցակցության զարգացման հետ մեկտեղ, նորարարությունների խթանման կարևոր պայման է նաև նոր կազմակերպությունների ի հայտ գալը: Զարգացած շուկայական տնտեսությունների մեծամասնության համար նորարարությունների ամենահզոր աղբյուրներից մեկը նոր կազմակերպություններն են: Այս առումով, պետական ծրագրերի կարևորագույն նպատակներից մեկը պետք է համարվի նոր կազմակերպությունների համար շուկա մուտք գործելու պայմանների մեղմացումը, որից անմիջականորեն կախված է նորարարական ներուժը և ՀՀ արտահանման ու տնտեսության դիվերսիֆիկացման խնդրի լուծումը:

Հողի արդյունավետ շուկաները հիմք են հանդիսանում սեփականատիրական հարաբերությունների և դրանց հիման վրա ներդրումային ծրագրերի ձևավորման համար: Դրանք հատկապես կարևոր են հաջողակ և նոր կազմակերպությունների համար, որոնք հողամասի կարիք ունեն արտադրության ընդլայնման և նոր շինարարության համար: Պետական ծրագրի

նպատակը պետք է լինի հողի և անշարժ գույքի լիարժեք շուկայի արագ զարգացումը, որը հաջող ներդրումային գործընթացի կարևորագույն պայմանն է:

Զարգացման ֆինանսական շուկաները կապիտալի արդյունավետ կենտրոնացման շնորհիվ խթանում են տնտեսական զարգացումը: Ավելին, արդյունավետ ֆինանսական համակարգը, բացահայտելով և աջակցելով ներդրողների հեռանկարային բիզնես գաղափարները և նախագծերը, հանդիսանում է նորարարական գործընթացների ամրապնդման կարևոր պայման:

Ներկայումս այս ոլորտի հիմնական խնդիրներն են վարկառուների իրավունքների պաշտպանվածության մակարդակի անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին, բանկային ծառայությունների շուկայում թույլ մրցակցությունը, վարկային կազմակերպությունների գործունեության ոչ բավարար թափանցիկությունը: Ազգային ֆինանսական համակարգի շրջանակներում ընդլայնվում են բաժնետիրական ընկերությունների երկարաժամկետ ֆինանսավորման հնարավորությունները: Ֆոնդային բորսան, նախկինի պես, չի հանդիսանում ներդրումների ֆինանսավորման էական աղբյուր:

Մասնավորապես, ընկերությունների համար երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների հասանելիության ընդլայնման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

զարգացման պետական ինստիտուտների կապիտալի մեծացում,  
պետական աջակցության ընդլայնում և վենչուրային կապիտալի հարկման կատարելագործում,

լիզինգի աջակցության մեխանիզմների արդյունավետության բարձրացում, հիփոթեքային շուկայի զարգացման միջոցով կենսաթոշակային, ապահովագրական և այլ ինստիտուցիոնալ ներդրողների միջոցները հասանելի դարձնել բանկային համակարգի համար՝ բնակչության երկարաժամկետ վարկերի ֆինանսավորման նպատակով,

արագ տեմպերով պետք է զարգանա ապահովագրական ծառայությունների շուկան, ներառյալ գույքային ապահովագրությունը, որը հետագայում կարող է դառնալ ներդրումային ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր:

Շարկային և մաքսային համակարգերի բարեփոխումների ընթացքում անհրաժեշտ է ապահովել, որպեսզի այդ համակարգերը գործեն էլնելով արդարության սկզբունքից, համապատասխան կարողություններ ունենան ստվերային տնտեսության կրճատման համար և միջազգային առումով լինեն մրցունակ՝ նպաստելով ներդրումային միջավայրի բարելավմանը: Այս առումով հարկային և մաքսային համակարգերի կատարելագործման կարևոր ուղղություններ պետք է դառնան՝

հարկեր/ՆԱ հարաբերակցության տարեցտարի ավելացումը՝ հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ հատվածի կրճատման միջոցով,

հարկային հսկողության արդյունավետության բարձրացումը՝ ռիսկային բարձր գոտում գտնվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցումների կիրառմամբ,

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակների ընդլայնումը՝ հարկային խախտումների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման նպատակով,

մաքսային համակարգի տեխնիկական և մասնագիտական կարողությունների շարունակական ընդլայնումը, եվրոպական երկրներում կիրառվող սահմանների համալիր կառավարման համակարգի լավագույն սկզբունքներին համահունչ պետական սահմանի անցման կետերում մաքսային ընթացակարգերի մշակումը և ներդրումը՝ հաշվի առնելով նաև մեկ կանգառ/մեկ պատուհանե սկզբունքը,

բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների համար պարզեցված մաքսային ընթացակարգերի կիրառման համակարգի մշակման և ներդրման աշխատանքների իրականացումը՝ անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմք ստեղծելով լիազորված տնտեսավարող օպերատորներին համակարգի ներդրման և կիրառման համար,

փոքր ու միջին բիզնեսի համար պարզեցված հարկային դաշտի ապահովումը և հարկային բեռի շարունակաբար տեղափոխումը դեպի խոշոր հարկատուներ,

հարկային վարչարարության պարզեցումը, էլեկտրոնային հաշվետվությունների համակարգի կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովել էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման լայն կիրառումը,

հարկ վճարողների շահերի պաշտպանությունը և նրանց սպասարկման որակի բարձրացումը, ինչը թույլ կտա հարկման հարաբերություններում ընդլայնել ինքնագնահատման համակարգի կիրառումը,

հարկային և մաքսային մարմինների տեխնիկական ապահովվածության մակարդակի, ինչպես նաև այդ մարմինների միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների բարելավումը՝ ստեղծելով տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացման գործուն տեղեկատվական համակարգ,

սահմանային անցակետերի, առաջին հերթին մաքսային տեղամասերի ժամանակակից պահանջներին համապատասխան արդիականացումը:

**Եզրակացություններ** բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղղությամբ մշակված առաջարկությունները: Դրանցից հիմնականները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ՝

1. Ներդրումները կարևորագույն դեր են խաղում յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման գործում: Ներդրումային ծրագրերի իրականացումը հնարավորություն է տալիս ավելացնել արտադրության ծավալները, կատարելագործել տեխնիկան և տեխնոլոգիան, թողարկել որակյալ և

միջազգային ստանդարտներին համապատասխանող արտադրանք, ստեղծել նոր աշխատատեղեր, նվազեցնել գործազրկությունը և, վերջին հաշվով, բարձրացնել բնակչության կենսամակարդակը: Ներդրումային նպատակաուղղված քաղաքականության մշակմամբ և նրա արդյունավետ իրականացմամբ է մեծապես պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը: Այս ամենը հաշվի առնելով՝ մեծ նշանակություն է տրվում արդյունավետ ներդրումային քաղաքականության մշակմանը և իրագործմանը, որն էլ ուղեկցվում է բազմաթիվ և բազմաբնույթ հիմնախնդիրների առաջացմամբ, որոնք լուծման կարիք ունեն:

2. Ժամանակակից տնտեսագիտության տեսակետից կապիտալ հասկացությունն օգտագործվում է երկու իմաստով: Առաջին իմաստով, կապիտալ բառն օգտագործվում է բնորոշելու արտադրության գործոնը, որին ստեղծում է տնտեսական համակարգը: Կապիտալ բարիքներ են անվանում արտադրողական բարիքները, որոնք օգտագործվում են որպես արտադրության գործոնների ծախսեր հետագա արտադրության համար: Կապիտալը որպես այդպիսին կարող է առանձնանալ արտադրության մյուս գործոններից հողից և աշխատանքից, որոնք սովորաբար, համարվում են, որ չեն ստեղծվում տնտեսական համակարգի կողմից: Ելնելով կապիտալ բարիքների տարատեսակությունից կապիտալի չափումը դարձել է տնտեսագիտության էական տարածայնությունների աղբյուր: Երկրորդ իմաստով կապիտալ հասկացությունն օգտագործվում է որպես եզր բնութագրելու ֆինանսական ակտիվները, ուստի և այս դեպքերում օգտագործվում է ֆինանսական կապիտալ և ֆինանսներ հասկացությունները:

3. Վերջին 20 տարիների ընթացքում փոխվել են ՎԱԿ-երի և՛ մասշտաբները, և՛ ձևերը, և՛ նրանց միջազգային գործառնությունները, ինչի հետևանքով տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ նրանց ռազմավարության և կառուցվածքի մեջ, որոնք ներկայումս որոշում են գոյություն ունեցող և ձևավորվող շուկաների ու ճյուղերի բնույթը: Մասնավորապես, անցած տարիներին ՎԱԿ-երի ինտեգրացված միջազգային արտադրության համակարգը ձևափոխվել է ինտեգրացված միջազգային ցանցի, որի շրջանակներում ՎԱԿ-երը ավելի լայնորեն են համակարգում անկախ կամ գրեթե անկախ կազմակերպությունների գործունեությունը, օրինակ ենթակապալի մեխանիզմների միջոցով և օգտագործելով նորարարական արտադրությունների ներուժը: Դրա հետ մեկտեղ այժմ ՎԱԿ-երը անհամեմատ ավելի լայնորեն են իրականացնում այնպիսի գործունեություն, որը ենթադրում է ոչ բաժնային մասնակցության ձևեր, օրինակ շինարարություն – տիրապետում – շահագործում - փոխանցումե սխեմայի շրջանակներում, երբ իրականացվելու են ենթակառուցվածքների վերաբերող ծրագրեր: Բացի այդ, ՎԱԿ-երի գործունեության մասշտաբների մեծ չափով ընդլայնմանը զուգահեռ, ողջ աշխարհում երևան են եկել նոր մասնակիցներ ու ներդրողներ, այդ թվում՝ զարգացող երկրների ՎԱԿ-եր, պետական ՎԱԿ-եր, ուղղակի ներդրումների մասնավոր հիմնադրամներ: ՎԱԿ-երի նոր ձևերը առաջ են բերում քաղաքականության խորը հետևանքներ ինչպես այն երկրներում, որտեղ գտնվում են այդ կազմակերպությունները, այնպես էլ ընդունող երկրներում և՛ ազգային և՛ միջազգային մակարդակներում:

Մասամբ այդ պատճառով վերջին ժամանակահատվածում նկատվել է տեղաշարժ պետության և՛ ներդրողների իրավունքների, և՛

պարտավորությունների միջև ավելի հավասարակշռված մոտեցումներ սահմանելու ուղղությամբ, ակնհայտ են նաև ներդրումային քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Ներկայում քայլեր են կատարվում ներդրումային ռեժիմները ազատականացնելու և օտարերկրյա ներդրումները խրախուսելու գործում՝ նկատի ունենալով մի կողմից ՕՈՒՆ ներգրավման համար սրվող մրցակցային պայքարը, իսկ մյուս կողմից, պետական քաղաքականության խնդիրների լուծման շրջանակներում, ուժեղացվում են ՕՈՒՆ կարգավորման մեխանիզմները: Արդյունքում առաջացել է իրականացվող քաղաքականության երկակիություն, որը չի համապատասխանում 1950-1970-ական թվականների (որոնց համար, առաջին հերթին, բնորոշ էր աճը պետության առաջատար դերակատարմամբ) և 1980-2000-ական թվականների սկզբի (երբ աճի հիմնական շարժիչ ուժը շուկան էր) առավել հստակ միտումներին: Քանի որ պետության և ներդրողի իրավունքների և պարտավորությունների հայեցակարգն անընդհատ զարգանում է, այդ պատճառով էլ ՕՈՒՆ ոլորտում ազատականացման և կարգավորման միջև լավագույն հարաբերակցության սահմանումը դառնում է դժվար լուծելի խնդիր: Կարևոր է ապահովել համաձայնեցում միջազգային և ներքին ներդրումային քաղաքականության և մյուս ոլորտներում (տնտեսական, սոցիալական և բնապահպանական) իրականացվող քաղաքականությունների միջև: Հաջողված օրինակ է ներդրումային և արդյունաբերական քաղաքականությունների միջև փոխհամագործակցությունը, որը պահանջում է համալիր մոտեցում՝ համագործակցող կողմերի միջև կապերի ստեղծման և կողմնակի արդյունքների (ներառյալ տեխնոլոգիաների տարածման) ապահովման համար, որոնք առաջանում են ներդրումներ ընդունող երկրում ՎԱԿ-երի գործունեության արդյունքում:

4. Աշխարհի երկրների կառավարությունների առջև կանգնած առաջնահերթ խնդիրներից է գիտակցել և խորապես ըմբռնել ազգային տնտեսությունների ու ՎԱԿ-երի գործունեության նոր մեխանիզմների և ձևերի փոխհամագործակցության առանձնահատկությունները, հատկապես պետության և այդ գործընթացի զարգացման մյուս մասնակիցների հետ: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ է փոխել եռակողմ ներդրումային փոխհարաբերությունները հատկապես ՎԱԿ-երի գրանցման երկրի, ներդրումներ ընդունող երկրի և օտարերկրյա ներդրողների իրավունքների ու պարտավորությունների մասով, որպեսզի արդյունավետ օգտագործվի ՎԱԿ-երի ավանդը և ներուժը երկրի զարգացման համար: Մասնավորապես, շրջանակային քաղաքականությունը պետք է ամրացնի ներդրումների և զարգացման միջև համագործակցության կարևոր գոտիները, օրինակ, օտարերկրյա ներդրումների և աղքատության հաղթահարման գործում դրանց եզրերը, հաշվի առնելով, առաջին հերթին, ՕՈՒՆ ընդունող երկրի զարգացման ազգային շահերն ու օգուտները: Անկասկած է, որ այդ գործում ՎԱԿ-երն ունեն որոշիչ դեր, ուստի, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ներդրումային ծրագրեր մշակելիս պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի մասնակից բոլոր կողմերի կայուն զարգացմանը: Ահա թե ինչու ՎԱԿ-երի գործունեության նոր մեխանիզմները ներդրումային քաղաքականության արդեն ձևավորված և գործող համակարգի պայմաններում պահանջում են նոր մոտեցումներ և հայեցակարգային լուծումներ, ներդրումներ-զարգացում է փոխհարաբերություններում:

5. ՕՈՒՆ համաշխարհային կառուցվածքում նկատվում են մի շարք խորքային տեղաշարժեր, որոնք նախորդել են համաշխարհային ֆինանսական ճգնաժամին և որոնց տեմպը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի աճել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հեռանկարում:

Նախ, շարունակել է աճել զարգացող երկրների և անցումային տնտեսությամբ երկրների տեսակարար կշիռը ինչպես ներդրումների տեղաբաշխման օբյեկտների, այնպես էլ համաշխարհային ՕՈՒՆ աղբյուրների տեսանկյուններից: Այդ երկրները, որոնց 2009 թ.-ին բաժին է ընկել ՕՈՒՆ համաշխարհային հոսքերի համարյա կեսը, ՕՈՒՆ աշխուժացման գործընթացում խաղում են առաջատար դեր:

Երկրորդ, վերջին ժամանակահատվածում վերամշակող արդյունաբերությունում ծառայությունների և արդյունահանող ճյուղերի հատվածում և գյուղատնտեսությունում կատարվող ներդրումների համեմատությամբ նկատվող հետագա անկումը հազիվ թե հնարավոր լինի կասեցնել:

Երրորդ, չնայած ՕՈՒՆ համար լուրջ հետևանքներին, համաշխարհային ճգնաժամը չի անգարեց և չմեկուսացրեց արտադրության հետագա միջազգայնացման գործընթացը:

6. Doing Business տարեկան ժողովածուներում ներկայացվում են ներդրողների պաշտպանվածության ոլորտում տեղի ունեցող զարգացումները, փոփոխությունները, համընդհանուր և տարածաշրջանային միտումները, լավագույն առաջընթաց արձանագրած երկրներն ու բարեփոխումներից հետ մնացող երկրները: Վերջին տարիների (2010-2012 թվականների) համար հրապարակված զեկույցներում ներդրողների պաշտպանությանը նվիրված մասերում հիմնական շեշտադրումը դրվում է մինորիտար (փոքր) բաժնետերերի շահերի պաշտպանությանը, ընկերությունների գործունեության հրապարակայնության (թափանցիկության) ավելացմանը, տնօրենների պատասխանատվության աստիճանի բարձրացմանը, փոխկապակցված անձանց միջև կնքվող ընկերության տնտեսական շահերին հակասող գործարքների նկատմամբ վերահսկողության սահմանմանը, ինչպես նաև առաջին հայացքից աննշան թվացող գործառույթներն օրենսդրությամբ կանոնակարգելու անհրաժեշտությանը: Այս ուղղություններով Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումներ, կարելի է ասել, չեն իրականացվում, ինչը կարող է հայաստանյան ընկերությունների ներդրումային գրավչության նվազման պատճառ դառնալ:

7. Ժամանակակից ուսումնասիրությունների արդյունքներից կարելի է եզրակացնել, որ կապիտալի, և առաջին հերթին ՕՈՒՆ-ների ներգրավման գործում, երկրի (տարածաշրջանի) ունակության վրա ազդում են երեք խումբ գործոններ.

- երկրում (տարածաշրջանում) տնտեսական իրավիճակը,
- ներդրումների ներգրավման ռազմավարությունը (այդ թվում՝ ներդրումների ինստիտուցիոնալ զարգացման ռազմավարությունը),
- ներդրումների շարժի և օժանդակության ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունն ու դրանց արդյունավետ աշխատանքը:

8. Ներդրումների ներգրավման տեղական նշանակության հիմնախնդիրների մի մասը պետք է լուծվի պետական, մյուս մասը՝ կորպորատիվ մակարդակով: Ըստ կատարված վերլուծության՝ օտարերկրյա

ներդրումների ներգրավման ճանապարհին խոչընդոտների վերացման համար պետք է ջանքերը կենտրոնացնել հետևյալ հիմնախնդիրների լուծման վրա.

➤ ապահովել օտարերկրյա ներդրումների ներգրավման ինստիտուցիոնալ համակարգի ամբողջությունը պետական կենսունակ ծրագրերի մշակման միջոցով,

➤ պարզեցնել և ազատականացնել հարկային օրենսդրությունը,

➤ ապահովել մաքսային ռեժիմի հաստատությունը և հետևել, որ մաքսային կանոնները չխոչընդոտեն նորագույն, առաջատար տեխնիկայի և տեխնոլոգիաների ներկրումը դեպի երկիր,

➤ հուսալի կարգուկանոն հաստատել վճարահաշվարկային համակարգում, ինչը թույլ կտա հաշվարկներ իրականացնել երկրի ողջ տարածքում,

➤ ստեղծել պետական օժանդակության գործուն համակարգ՝ ձեռնարկատերերին օգնելու նպատակով, հատկապես՝ փոքր և միջին բիզնեսի բնագավառում:

9. Առաջիկա տարիներին ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղղելով ձեռնարկատիրության զարգացմանը, ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգի կայացմանը, կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը, կարգավորման ազդեցության գնահատման համակարգի բարելավմանը, վարչարարության և տնտեսվարողների ծախսերի նվազեցմանը: Պետք է կարևորվի նաև վերազգային ընկերությունների ներգրավման գործընթացը՝ հաշվի առնելով դրանց առանցքային նշանակությունը նոր տեխնոլոգիաների փոխանցման, իրացման շուկաների ընդլայնման և աշխատանքի բարձր արտադրողականության ապահովման գործում:

10. Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից է ներդրումային գրավչության երաշխիքների ապահովումը, բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի կայացմանն ուղղված ջանքերի շարունակական բնույթը: ՀՀ կառավարությունն առանձնակի կարևորություն պետք է տա անհարկի պետական միջամտության բեռի թեթևացմանը: Այս առումով անհրաժեշտ է՝

➤ շարունակվել գործարար միջավայրի բարելավման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները՝ գործարարության (հատկապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների) համար վարչարարական ընթացակարգերի պարզեցման, կանխիկով գործարքների կատարման շրջանակը փոքրացնելու, հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականության վարմանն ուղղությամբ,

➤ շարունակվել տեսչական բարեփոխումների շրջանակներում նախատեսված աշխատանքները՝ ամբողջությամբ ներդնելով ընկերությունների ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը և պետական մարմինների տեսչական գործառնությունները,

➤ ներկայումս իրականացվող Կարգավորման գիյոտինե ծրագրի միջոցով վերացնել անտեղի վարչարարական խոչընդոտները և քաղաքացիների ու գործարարների համար չհիմնավորված ծախս առաջացնող կարգավորումները (իրավական ակտերը), ինչպես նաև ամբողջությամբ ներդնել իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման մեխանիզմը, ինչը

հնարավորություն կընձեռի խուսափելու գործարարության համար լրացուցիչ բեռ առաջացնող նոր իրավական ակտերի ընդունումից,

➤ վերանայել ներդրումային նպատակային քաղաքականությունը, այդ թվում՝ դիտարկելով օտարերկրյա ներդրումներին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործման, Հայաստանի Հանրապետության ներդրումային ներուժի և մրցակցային առավելությունների բացահայտման ուղիները,

➤ ներդրումային միջավայրի բարելավման և օտարերկրյա ներդրումների (մասնավորապես վերագրային ընկերությունների կողմից կատարվող ներդրումների) ներգրավման նպատակով Հայաստանի Հանրապետության ներդրումային օրենսդրությունը ներդաշնակեցնել եվրոպական չափանիշներին, ձևավորել և զարգացնել ազատ տնտեսական գոտիները,

➤ պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացման նպատակով կատարելագործել օրենսդրական դաշտը և իրականացնել նոր պետություն-մասնավոր հատված համագործակցության ծրագրեր (հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ընդունված հայեցակարգային մոտեցումները մեծամասամբ թղթի վրա է են մնացել),

➤ նոր շուկաների բացահայտման և արտահանման ծավալների ավելացման նպատակով ստեղծել արտահանման ֆինանսավորման ապահովագրական ընկերություն,

➤ փոքր և միջին բիզնեսի համար ձևավորել պարզեցված հարկային դաշտ,

➤ ներդնել արդյունավետ սեփականատիրության լավագույն նորմերը՝ հանրապետության ազգային հարստության և հատկապես հողի լիարժեք և նպատակային օգտագործման նպատակով:

11. Հետագա տարիներին ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից պետք է լինի պետություն-մասնավոր հատվածի համագործակցության սկզբունքի ներքո (մասնավորապես՝ երկկողմ պարտավորությունների սահմանման միջոցով, ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավմամբ), միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացմանը նպաստելը: Պետություն-մասնավոր հատվածի համագործակցության յուրաքանչյուր ծրագրին անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում, և մրցունակ ու զարգացման տանող յուրաքանչյուր ներդրումային ծրագիր պետք է ստանա պետության աջակցությունը:

12. Հայաստանի Հանրապետությունում վարվող ներդրումային քաղաքականությունը պետք է համահունչ լինի ամբողջ աշխարհում ձևավորվող նոր սերնդի ներդրումային քաղաքականությանը, որը վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով տեղի ունեցած ճշգրտումներից արդյունք է: Այդպիսի քաղաքականության նպատակները հետևյալներն են՝

➤ փոխկապվածություն ստեղծել երկրի տնտեսական զարգացման ընդհանուր նպատակների և արդյունաբերական քաղաքականության միջև, ինչպես նաև մեկտեղել զարգացման ռազմավարությունները,

➤ ձևավորել պատասխանատու ներդրողի վարքագիծ, որն իր վրա կվերցնի նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանն սկզբունքների իրականացումը,

➤ ապահովել վարվող ներդրումային քաղաքականության արդյունավետությունը՝ ինչպես դրա մշակման և իրականացման ընթացքում, այնպես էլ այն ինստիտուցիոնալ միջավայրի տեսանկյունից, որտեղ իրականացվելու է տվյալ քաղաքականությունը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Կ.Խ.Շահբազյան. ,Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրը և արտաքին առևտուրը, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, N 6 (32), 2012թ., էջ 47-55:

2. Կորյուն Շահբազյան. ,Օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը, դրանց բաշխումը և խթանման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, ,Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները գիտաժողովի նյութերի ժողովածու, 2012թ., էջ 114-119:

3. Աշոտ Մարկոսյան, Կորյուն Շահբազյան. ,Կապիտալ հասկացության ժամանակակից մեկնաբանումները, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական աշխատությունների ժողովածու, N IV (43), 2011թ., էջ 151-158:

4. Աշոտ Մարկոսյան, Կորյուն Շահբազյան. ,Ներդրումների համաշխարհային միտումները և հեռանկարները, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական աշխատությունների ժողովածու, N IV (43), 2011թ., էջ 159-168:

5. Կ.Խ.Շահբազյան. ,Ներդրումների ներգրավման նախադրյալները և դրանց ռիսկայնության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, N 1, 2013թ., էջ 114-123:

**ШАХБАЗЯН КОРЮН ХАЧАТУРОВИЧ**

**“Пути совершенствования инвестиционной среды  
в Республике Армения**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 18 октября 2013г. в 13.30 часов, на заседании Специализированного совета по экономике 015 ВАК Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

**Р Е З Ю М Е**

Объем инвестиций в экономику сильно зависит от инвестиционной среды принимающей страны. Только декларированием политики «открытых дверей» невозможно увеличить объем инвестиций в экономику, которая отличается высокой степенью рискованности и нестабильности.

Инвестиционная среда в Армении считается одной из самых либеральных в странах СНГ. Однако объемы привлеченных инвестиций, особенно в высокотехнологичные отрасли, недостаточны для обеспечения устойчивого экономического роста и очень слабо отражаются на повышении уровня жизни населения.

Посткризисное увеличение потоков иностранных инвестиций в страны с переходной экономикой осуществляется в основном за счет инвестиций в новые проекты (проекты с чистого листа), в отличие от развитых стран, где основные инвестиционные потоки перенаправляются транснациональными корпорациями посредством массовых слияний и поглощений предприятий.

Армении, как и многим другим странам с переходной экономикой, необходимы широкомасштабные инвестиции в реальную экономику. Однако инвесторы, целью которых является (и всегда являлось) получение наибольшей прибыли при минимальных рисках потери инвестиций, не всегда охотно инвестируют в экономику страны с маленьким рынком и местоположением, которое не обеспечивает выхода к морю. В случае с Арменией данные обстоятельства усугубляются отсутствием экономических отношений с соседними странами.

Диссертация посвящена изучению путей усовершенствования инвестиционной среды, которая обеспечит устойчивый экономический рост.

Для достижения указанной цели в диссертационной работе поставлены следующие задачи:

- исследовать современную трактовку понятия капитал как экономической субстанции инвестиций;
- исследовать потоки международного движения инвестиций, выявить тенденции и перспективы инвестиционной деятельности;
- выявить современные средства (в том числе - законодательные) для усиления защиты инвестиций;
- исследовать основные элементы инвестиционной политики Республики Армения и выявить факторы, влияющие на рискованность инвестиций;
- исследовать основные факторы, составляющие сильные и слабые стороны инвестиционной среды Армении, обсудить динамику прямых иностранных инвестиций и их нынешнюю структуру;
- обсудить основные направления улучшения инвестиционной среды в Армении, которые могут способствовать повышению экономической эффективности;
- изучить основные направления реформ и мероприятий способствующих привлечению инвестиций.

Исследования и анализ, проведенные в диссертационной работе, обладают научной новизной и сформулированы следующим образом:

- выявлены сильные и слабые стороны инвестиционной привлекательности Республики Армения. К сильным относятся: возможность владения 100 процентами собственности коммерческих организаций, отсутствие каких-либо разрешений для осуществления инвестиций, отсутствие ограничений для вывоза капитала, возможность продления срока выплаты налогов и др. Среди слабых сторон можно отметить: небольшой внутренний рынок, небольшую численность населения и низкий уровень ВВП на душу населения, ограниченность природных ресурсов и отсутствие энергоносителей, транспортные проблемы и высокие транзакционные издержки;
- выявлены факторы, влияющие на рисковость инвестиционной среды, которые имеют как экономический, так и организационный характер;
- предложены основные пути уменьшения рискованности инвестиций, которые отражаются в обеспечении условий для стабильной и предсказуемой юридической защиты инвестиций и сделок по ним, в устранении налоговых и административных ограничений, привлечении инвестиций со стороны транснациональных корпораций, диверсификации структуры экспорта;

- предложены основные направления по улучшению инвестиционной среды, имеющие как институциональный, так и организационный характер;
- разработаны мероприятия, касающиеся первоочередных направлений налоговых и таможенных реформ (включая налоговый учет, ведение счетов, отчетность налогоплательщиков, использование налоговой информации, процедуру таможенных оформлений, снижение таможенных рисков, усовершенствование технологий таможенного контроля).

**SHAHBAZYAN KORYUN KHACHATUR**

**The ways of Improving of investment environment  
in the Republic of Armenia**

The dissertation is submitted for the scientific degree of candidate of economic sciences in specialty 08.00.02 "Economics, Management of economy and its sectors"

The defense of the dissertation will take place at 13.30 , on 18 october 2013, at the meeting of the Special Board for Economics 015 of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University, located at 52, Abovyan str., Yerevan, 0009, Armenia

**S U M M A R Y**

The volume of investments in the economy is highly dependent on the investment environment of the host country. Just declaring the policy of "open doors" can't increase the volume of investments in that economy which has high level of risks and instability.

Investment environment in Armenia is considered as one of the most liberal in the CIS countries. However, the volume of attracted investments, especially in high-technology industries, is not sufficient to ensure sustainable economic growth and have very little impact on improving the living standards of the population.

Post-crisis increase in the flows of foreign investments in transition economies is mainly due to investments in new projects (greenfield projects), in contrast to developed countries, where basic investments flows are redirected by transnational corporations through mass mergers and acquisitions of businesses.

Armenia, like many other countries with transitional economy, are needed a large-scale investments in the real sector of economy. However, investors whose purpose is (and always has been) to maximize profit with minimal risk of loss of investment, are not always willing to invest in the economy of the country with a small market and geographical location that does not provide access to the sea. In the case of Armenia, these circumstances are compounded by the lack of economic relations with neighboring countries.

The dissertation deals with ways to improve the investment environment that will ensure the sustainable economic growth.

To achieve the above purpose the following problems were formulated in the dissertation:

- to explore the modern interpretation of the concept of capital as the economic substance of investments;
- to examine an international movement of investment flows, to identify trends and prospective of investment activities;
- to identify the modern tools (including – legislative) to enhance the protection of investments;
- to explore the basic elements of the investment policy of the Republic of Armenia and to identify factors affecting to the riskiness of the investments;
- to explore the major factors that make up the strengths and weaknesses of the investment environment in Armenia, to discuss the dynamics of foreign direct investment and its current structure;
- to discuss the main directions of improving the investment environment in Armenia, which can improve economic efficiency;
- to learn the basic directions of recent reforms and measures for investments attraction.

The rresearch and analytical work done in this dissertation have scientific novelty and formulated as follows:

- Identified the strengths and weaknesses of the investment attractiveness of the Republic of Armenia. The strengths include the possibility of owning 100 percent ownership of commercial organizations, the lack of any permits for investment, absence of restrictions on the export of capital, the possibility of extending the term of payment of taxes, etc. Among the weaknesses include: a small domestic market, the small population and low level of GDP per capita, limited natural resources and a lack of energy resources, transportation problems and high transactional costs;
- The factors influencing on the riskiness of the investment environment, which have both economic and institutional aspects;
- The basic ways of reducing the riskiness of investments, which are recognized to provide the conditions for a stable and predictable legal protection of investments and transactions on them to eliminate the tax and regulatory constraints, attracting investment from transnational corporations, diversification of exports;
- The basic directions to improve an investment environment, with both institutional and organizational aspects;
- To develop activities related to the priority areas of tax and customs reforms (including tax accounting, billing, taxpayers reporting, using of tax information, the procedure of custom clearance, customs risk reduction, improvement of customs control technology).

